

Կանխագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՃԱԴԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Թիւ 40




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Գրք



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏ ՀԱՆՐԱԿԻԶԱԳ HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ ՄՈՋԵԼՈՐ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 40 || 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903

ԽՈՆԱՆՔ



Անծիր, աննիւթ ապաւէն մ'է դիւթական,
Մարմինն նըկուն պատեանին մէջ՝ մեր հոգին,
— Մե՛ծ զօրավիգ, որուն կ'ըղծանք մենք այնքան,
Երբ կեանքը իր հատնումին մէջ է վերջին:

Երբ կը խուսի լոյսը վըճիտ աչքերէ,
Ա՛լ անկարող ծըծելու բիլն եմերին,
Խաւարը երբ ջինջ նայուածքը կ'ըստուերէ,
Կայծ մ'անծկուծեան հոն կը վառի դեռ յետին:

Բոսորագեղ թերթերէն ալ շուրթերու
Երբ կը մարի տակաւ փառքը թարմ վարդի,
Հըրաւիրակ հոգւոյն կանչ մը աղերսու,
Թոյլ, երբուն շուրթնէն իսպառ կ'անհետի:

Ու կը փարինք ջըղածգարար այդ անուան,
Բայց կարկամած մատով՝ կեանքը՝ արեան հետ՝
Կ'անցնի անդարձ, եւ ա՛լ անզօր, անշրջան,
Հոգին առած թեւեր՝ կ'ըլլայ մեզ անհետ:

ԱՇՈՏ Բ. ԲԷՉԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շար. 39րդ թիւէն)

ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՊԱՅՄԱՌՈՒԹԻՒՆ ՈՃԻ

Սահմանը. — Մթութեան կամ խրքնութեան այլ եւ այլ պատ-
ճառները. — Բռնագրօսիկ կամ պատ ի պատ բացաւրութիւններ. —
Շրջում (inversion)

Ոճին յստակութեան մէկ պայմանն ալ բառերուն յստակու-
թիւնն է: Յստակութիւն ըսելով հոս կ'հասկնանք բառին և մտա-
ծումին իրարու հետ ունեցած կատարեալ վերաբերութիւնը կամ
սեփականութիւնը: Յատուկ բառ մը կ'բացատրէ գաղափար մը իր
բոլոր ամբողջութեամբը. կէս յատուկ բառ մը միայն կ'իտովին կը
բացատրէ գաղափարը, իսկ անյատուկ բառ մը բոլորովին կ'այ-
լայլէ իմաստը: Հայագէտ այսինքն գրաբարաշէտ Եւրոպացի մը
իր նամակը կ'վերջացնէր սապէս՝

« ձմեղնով ձեռքդ մնամ բարեկամ քոյ »

Փոխանակ ըսելու սեղմելով ձեռքդ :

Հայախօս միսիոնարուհի մ'ալ կ'ըսէր իր կօշկակարին. « Կօ-
շիկներս շատ արդար են », փոխանակ « Կօշիկներս շատ յարմար
են » կամ շատ նիւզ են, ըսելու:

Նմանապէս բառերու յստակութեան դէմ մեղանչել է երբ մէկն
ըսէ. վատառողջութիւն կ'վայելէ, վասն զի ինչ որ գէտ է, նեղու-
թիւն, իւրանք կ'պատճառէ և ոչ թէ ուրախութիւն, զի վայելել ու-
րախութեան իմաստ ունի:

Գաղափարի մը յատուկ բառը գտնելու դժուարութիւն պատ-
ճառողն է այն առերեւոյթ նմանութիւնը զոր ունին լեզուաց մէջ
հոմանիւտ կամ նմանանիւտ (synonime) կոչուած բառերը. առերե-
ւոյթ նմանութիւն կ'ըսենք, վասն զի շատ հազուադէպ է որ մի
եւ նոյն գաղափարը շատ մը բառերով բացատրուի, ընդհակառակն
ամէն գաղափար ունի իրեն յատուկ նշանակիչ բառն զորս փոխել
կարելի չէ:

Մեր լեզուին մէջ ալ նմանաւանդ կան՝ շատ մը հոմանիւտ բա-
ռեր զոր անխտիր կերպով իրարու տեղ գործածելու մոլութիւնն
ունին ամէն անոնք որք հայ լեզուին ոգին չեն հասկցած: Օրինակի
համար, ուրախութիւն, խնդութիւն, զուարթութիւն, հրճուանք,
բերկրանք, կամ թէ ասոնց հականիշն եղող տրամութիւն, իւրութիւն,

վիճե, քառապայման, մոմոմ եւայլն, եւ ուրիշ նոյնիմաստ բառեր, թէեւ յաճախ իրարու տեղ կ'գործածուին, սակայն գիտնալու է թէ ասոնք ամէնքն ալ ուրախութեան կամ տխրութեան գաղափարին ու զգացումին այլ և այլ աստիճանները կ'յայտենն, զոր որոշելու եւ ընտրանօք գործածելու միակ ապահովագոյն միջոցն է ընտիր հեղինակներու, հին ու նոր հայերէնի հմուտ գրագէտներու գրուածքներն յաճախ կարդալ:

Ուղիղ բանը (bon sens) կամ ողջմտութիւնը մանաւանդ ըլլալու է մեզ առաջնորդ մեր բացատրել ուզած գաղափարին յատուկ բառերը փնտռելուն մէջ:

Ժէ. րդ դարու նշանաւոր մատենագիր մը, Լա Պուլյէր Բըսէ. « Բոլոր այն զանազան բացատրութեանց մէջ որ կրնան մեր մտածումներէն մին յայտնել, անոնց ամէնէն միայն մէկն է լաւը, եւ այս լաւն ալ մարդուս չի հանդիպիր միշտ խօսած կամ գրած աստեն: Այսու ամենայնիւ կայ ան, բոլոր ինչ որ ան չէ միշտ տրկար է, չի գոհացներ երբէք մտքի մարդը որ կ'ուզէ ինքզինք հասկնալի ընել »:

Երկդիմութիւնը (l'equivoque) ալ ոճին պայծառութեան կ'ընտան. երկդիմի է բառ մը զոր կ'գործածենք, իրօք պատշաճ կամ տարբեր մտքով մը, կամ դիտմամբ կ'գործածենք մեր ճշմարտապէս ըսելիքէն տարբեր ուրիշ բան մը հասկցնելու համար:

Կրկին իմաստով խօսքերը, ինչպէս նաեւ կրկին նշանակութեամբ բառերն երկդիմի են: Օրինակի համար. հաւ' հայերէն թէ մեծ հայր կ'նշանակէ, թէ հաւկիթն ածող հաւը (թափուգ). — Արմաւ' թէ պտուղ մ'է (խուրմա) և թէ կ'նշանակէ թռչուն մը:

Երբ ըսենք, « Իմ հաւս շատ կ'սիրէր արմաւը, » այս խօսքին մէջ. բնական է թէ երկդիմութիւն մը կայ: — Հոս սիրողն ո՞վ է, քալովսն է թէ քսեմն. սիրուածը պսո՞ւղն է թէ քուչունն, որոց երկուքն ալ կ'հասկցուին:

Երկդիմութիւն կայ նմանապէս յետագայ խօսքին մէջ:

« Սա վարսագեղ ծառը մեծ շուք կուտայ պարսիզին »

Աս խօսքին մէջ շուք բառն երկդիմի է. զի շուք բառը կրկին նշանակութիւնն ունի. թէ հովանի (կեօլիկ) կ'նշանակէ թէ ճեղուքիւն, վայելչութիւն, փառաւորութիւն եւայլն. զի կ'ըսենք շուքը ծանր մարդ է, պատկառելի է ըսելու տեղ:

Ծառը պարսիզին մեծվայելչութիւն, չքեղութիւն կուտայ թէ մեծ հովանի. յայտնի չէ. մթին է, յստակ չէ:

Նմանապէս պատգամները զորս մթին ու խրթին ձեւով մը տալուն մէջ շահ ունէին քուրմերը կամ հարցուկները երկդիմութիւններ էին:

Գիտութեամբ գործածուած երկդիմութիւնները զաւելտական կամ կատակերգական նիւթերու կ'պատշաճի: Նշանաւոր կատակերգու Մուրիէր շատ հաճելի եւ գուարճալի կերպով մը կ'գործածէ երկդիմութիւնը:

Մուրիէրի Բռնի ամուսնութիւն անուն կատակերգութեան մէջ, Սկանարէլ կ'հարցնէ Բանգրաս փիլիսոփային թէ աղէկ պիտի ըլլա՞յ ամուսնանալը:

«Ի՞նչ լեզու կ'ուզեմ դուք գործածել ինծի հետ», անոր կ'ըսէ փիլիսոփան խնդրոյն մէջ մտնելէ կամ անոր հարցման բուն նիւթին վրայ խօսելէ առաջ. «Մեղա՛յ, դուն ալ, ան լեզուն զոր ունիմ հոս բերնիս մէջ»։ Անոր կը պատասխանէ Սկանարէլ համբերութիւնը հատած, «Ձի պիտի երթամ դրացիքիս լեզուն առնել բերել հոս ա՛»:

== Գրագիտութեան ուսուցիչք պատմագէտ ալ ըլլալով՝ վերոյիշեալ յատուկ անուններուն կապուած կամ անոնց վերաբերող լրացուցիչ պատմական պարագաները հրահանգիչ շինիչ ու հըմտացուցիչ կերպով բացատրելու են իրենց ուսանողաց:

Ոճերու այլեւայլ յատկութիւնները աւելի դործնական կերպով դիւրըմբռնելի ու մարսելի ընելու համար, անոնցմէ անձնիւրին համեմատ արձակ թէ ոտանաւոր հատուածներու Հաւաքածոյ մ'ալ ընտրանօք պատրաստելու վրայ ենք: Կանոնագիտական մասն աւարտածին պէս պիտի սկսուի սոյն վերլուծական ոճով Հաւաքածոյին հրատարակութեան մասս առ մաս:

Շար.

ԱՐՄԵՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ

Ո՞վ է մարդ պատուական, — Ա՛յն՝ որ չմնար ըստ ամենայնի պարտական:

— Պէտք է արդար ըլլանք, առանց վարձատրութեան սպասելու:

— Գէշ լեզուն գէշ սիրտ մը կը ցուցնէ:

— Ազնիւ սրտի մը առաջին պէտքն է երաստագիտութիւնը:

— Երեք բան կայ դժուար, գաղտնիք մը պահել, նախատինքի մը դիմանալ եւ ժամանակը պարապ գործածել:

— Բարկութիւնը ու շտապելը՝ բարի խրատը կը խափանեն:

— Անգործ ուղեղը՝ սատանային գործարանն է:

— Անտէր տղան՝ կամ գող եւ կա՛մ անղգամ կ'ըլլայ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԼԻՆ ԵՐ ՆՈՐ ԱԶԳԵՐՈՐ

Գ.

ԶԻՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ Ի Ր Ե Ւ Լ Ե Զ Ո Ւ

Զինական մատենագրութեան պատմութիւնը սկսելէ առաջ, հարկ է ըսել թէ՛ լեզուագէտք լեզուները իրենց կազմութեան տեսակէտով երեք դասերու կը բաժնեն.

Ա. Միավանկային լեզուներ (Langues monosyllabiques)

Բ. Բարդային լեզուներ (Langues agglutinantes)

Գ. Հոլովական լեզուներ (Langues à flexions)

Միավանկային են ա՛յն լեզուները որոնց մէջ ամէն բառ միավանկ է և ամէն բառ արմատ: Բառ մը ընդհանուր տարտամ իմաստ մը կուտայ միայն, բնաւ յանգ մը չորոշէր ածականը գոյականէն, գոյականը բայէն ևն. սեռի, թիւի, եղանակի, ժամանակի և այլ տարբերութիւնները չեն որոշուիր մասնիկներով, հոլովումով կամ խոնարհումով. խօսքին մէջ միայն բառերուն բռնած տեղը, դիրքն է որ միտքի այս պէտքերը կը գոհացնէ, բառերն են որ իրար կ'որոշեն ու կ'որակեն: Խսկէ կը հասկցուի թէ միավանկային լեզուներու քերականութիւնը պարզ շարադասութիւն մը կրնայ ըլլալ լոկ:

Լեզուագէտներ՝ որոնք ցարդ մեծամեծ խուզարկութիւններ ըրած են կը ջանան ապացուցանել թէ արդեօք ամէն լեզու ալ անցած է այս վիճակէն որ լեզուներու կազմութեան առաջին քայլն է թէ՛ ամէն Բարդային լեզու նախ միավանկային եղած և ամէն հոլովային լեզու նախ առաջին միավանկային եղած, յետոյ բարդային եւ ամէնէն ետք հոլովական, որ վերին խաւն է լեզուային երկրաբանութեան:

Բարդային լեզուներու մէջ բառը միավանկ չէ, այլ մէկէ աւելի արմատ բառեր իրար բարդուելով նոր բառ մը կ'արտադրեն աւելի իմաստալից, աւելի ճսխ:

Իսկ հոլովական կ'ըստին այն լեզուները որոնց մէջ բառերու վերջաւորութիւնք զանազան փոփոխութիւններ կը կրեն մասնիկներու յաւելմամբ:

Միավանկային գլխաւոր լեզուներ են Չինարէնը, Սիամերէնը, Աննամերէնը, Պիրմաներէնը, Թիպէթերէնը:

Բարդային լեզուի կարգէն են Ճարոներէնը, Թաթարական լեզուները, Կովկասեան լեզուները, Հունգարերէն, Աւստրալիոյ, Ափրիկէի եւ Ամերիկայի բնիկ բարբառներէն շատերը. իսկ հոլովական ճիւղին կը պատկանին հնդիկ-եւրոպական, փամական եւ Սեմական լեզուները:

Կը կարծուի թէ բարդային լեզուները երբեմն միավանկային էին միանգամայն. բայց ասկէ պէտք չէ հետեւցնել թէ այսօր այս վիճակներէն առաջինին մէջ գտնուող լեզու մը քիչ ատենէն անպատճառ երկրորդին պիտի անցնի եւ երկրորդին մէջ գտնուող մըն ալ՝ երրորդին, վասն զի շատ մը միավանկային լեզուներ իսպառ կորսուած են առանց վիճակի փոփոխութեան, կան ալ որ առաջին երկու վիճակներու մէջ դարերէ ի վեր վերջնական հաստատութիւն ստացած են եւ պատմական ու մատենագրական վիճակի հասած, ինչ որ թերեւս գլխաւոր պատճառը եղած է այդ լեզուներու զարգացման կասելուն:


* * *

Չինական գիրերը ձայնական տարր մը չէ որ կը ներկայացնեն այլ ամբողջ բառեր: Չինարէնի մէջ ո՛րչափ բառ, որչափ գաղափար գրեթէ այնչափ ալ գիր կայ, գիրերը գիր-բառեր են պարզապէս: Այբուբենական նշաններու թիւը մինչեւ 80,000ի կը բարձրանայ. բայց ասոնց մէջ կ'որոշեն 214 'Իասագլուխ կամ բանալիներ որոնք միւս բոլոր նշաններուն տարրերը իրենց մէջ կը պարունակեն եւ բառարաններուն մէջ բառերու դասակարգութիւնը կ'որոշեն:

Չինական գիրերուն կամ բռնալիներուն մէջ կայ մաս մը որ ի սկզբան բոլորովին պատկերատիպ եղած է. օրինակի համար, լեռան, ծառի, շան պատկերներ մերթ առանձինն գործածուած են և մերթ զուգորդուած՝ յօդուածոյ գաղափար մը բացատրելու համար, այսպէս ջուրի եւ աչքի պատկերները միաւորելով արցունք կը նշանակէին, դրան եւ ականջի պատկերները միաւորելով՝ լսել են: Բայց այս պատկերները քիչ քիչ իրենց նախնական ձեւը կորսնցուցին եւ դադրեցան ուղղակի կերպով ներկայացնելէ աչքի այս գաղափարը: Այս տեսակ նշաններու թիւը 200ի կը հասնի:

ՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՆԵՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ



Գ . Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Մ

(Շարուն. 39րդ թիւէն եւ վերջ)

Զ . Տ Ե Ս Ա Ր Ա Ն

Տիկ. ՀոհփՍ. ԱՏՐԻՆԷ, ՇՈՒՇԱՆ, ՍԱԹԵՆԻԿ, ԱՐԱՔՍԻ (ծպտեալ), ԳԱՌՆԻԿ

Տիկ. Հո. — Աղէկ եկար, չարաճճի մը քեզի, ինչո՞ւ համար առաջ հոս չեկար, երբ կոտորեցիր չեմ գիտեր որ կողմդ. ըսէ՛ տեսնեմ, հիմա ալ համար եղար, դուն որ այնքան շատախօս էիր:

Շուշան. (Կամաց մը). — Խօսէ՛:

Արաքս. (Կամաց մը Շուշանին). — Չեմ համարձակիր, ճայնս պիտի ճանչնայ:

Շուշան. — Տիկին, խեղճ մօրաքեռորդիս շատ մեղք է. ո՛չ միայն ոտքը կոտրած է, այլ նաև ինկած ատենը լեզուն ալ խածեր երկու կտոր ըրեր է: Հիմա չկրնար խօսիլ. վա՛խ:

Տիկ. Հո. — Խեղճ Շուշանս, շատ կը մեղքեամ, նայի՛մ լեզուդ:

Շուշ. — Ո՛չ տիկին, բժիշկը ըսաւ որ լեզուն պաղ չառնէ եւ բերանը թող միշտ գոց պահէ:

Տիկ. Հո. — Ա՛յ, ա՛յ, ա՛յ, (մօտենալով ուշադրութեամբ կը դիտէ, բայց Արաքսի կռնակը կը դարձնէ), ըսէ՛, աղջիկս, ականջներդ ալ չեն կոտրած ես. (Արաքսի գլխով հաստատական նշան կուտայ). Կը ճանչնաս այն սպասուհին որ քու մօրեղբորորդիդ է եղեր: (Կրկին հաստատական նշան) եւ ա՞յն է որուն համար ըսի թէ երթայիր հոս բերէիր, այնպէս չէ՞: (Հաստատական նշան). Ուրեմն ի՞նչպէս կ'ըլլայ որ ոչ ոք տեսած կ'ըլլայ քեզի մօրեղբորորդուդ տունը: (Արաքսի ուսերը վեր կ'առնէ, եւ ի՞նչ գիտնամ ըսելու. ձեռով մը):

Շուշան. — Տիկին, պատճառը...

Տիկ. Հո. — Լռէ՛ դուն, ես քեզի հետ չեմ խօսիր կոր:

Շուշան. — Բայց քանի որ մօրեղբորորդիս լեզուն բռնուած է, պէտք է որ ես անոր տեղը պատասխանեմ:

Տիկ. Հո. — Իրաւ ըսիր, աղջիկ, իրաւունք ունիս, ըսէ՛ նայի՛մ:

Շուշան. — Մօրեղբորս աղջկանը հանդիպեցայ ճամբան, ուրկէ իմացայ թէ զիս դարձեալ ձեր ծառայութեան մէջ առնելու չընորհն ըրեր էք:

Տիկ. Հո. — Ճամբան, ճամբան սանդուխ կար: Չէ՞ մի որ մօրեղբորդ աղջիկը անկէ իջած ատենը կոտրեր է:

Շուշ. — Թեւը, տիկին:

Տիկ. Հո. — Թեւը... բայց կը կաղայ, չէ՞ք տեսներ:

Շուշ. — Այո՛, թեւը չի յոգնելու համար է, տիկին:

Տիկ. Հո. — Սաղուխէ մը իջած ատենը, հէ՛:

Շուշ. — Սանդուխէ մը, այո՛, տիկին, քարէ սանդուխէ մը:

Տիկ. Հո. — Փողոցին մէջ:

Շուշ. — Փողոցին մէջ, տիկին, պատին քովի քարէ սանդուխէն, որու ոտքին մէկը խարխուլ ըլլալով, բա՛թ, խեղճը թաւալգլոր վար ինկաւ, կարծեցի թէ մեռաւ, խեղճ աղջիկ, իրաւ որ շատ դժբախտ է:

Տիկ. Հո. (Ասրիճեիճ՝ կամաց մը). — Ի՞նչ կ'ըսես, Ատրինէ, դուն կը հաւատա՞ս եթէ իմ տեղս ըլլաս:

Ասր. — Շիտակը ես կը տարակուսիմ:

(Յակոբ կը մտնէ):

Է. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԻ ԵՆ ՅԱԿՈԲ

Յակոբ. (Շուշանը ցոյց տալով). — Վե՛րջապէս գտայ:

Տիկ. Հո. — Ո՞վ:

Յակոբ. — Սա խառնակիչը, գողը:

Տիկ. Հո. — Ի՞նչ եղած է ձեզի, պարոն, կրնա՞ք ըսել:

Յակոբ. — Ուրիշ ի՞նչ պիտի ըլլայ, սա ձեր սպասուհին, Շուշանը, ինչ ալ աղէկ ընտրեր էք:

Տիկ. Հո. — Ի՞նչ կայ որ:

Յակոբ. — Ալ ի՞նչ պիտի ըլլայ: Անցած օր խանութ եկաւ և ձեռք մը հագուստ ուզեց՝ տուի. տեսէ՞ք ճիշդ սա հագած հագուստն է, երկու ժամէն կը բերեմ ըսաւ ստակին հետ միասին և երկու օր եղաւ, տակաւին ո՛չ հագուստը բերաւ ոչ ալ ստակը:

Տիկ. Հո. — Ինչպէ՞ս, սա Փառանձեմ ըսուածը Շուշանն է: Եւ այս Շուշանը ով է. (նայելով Արափիին):

Արաֆսի. (իբ մօրաբոյրին ծունգերուն նետուելով). — Ես եմ մօրաբոյր:

Տիկ. Հո. — Ի՞նչ, քեռորդիս. Արաքսին, Արաքսի՛, դո՞ւն ես Սաք. — Ներեցէ՛ք իրեն, մօրաբոյր:

Տիկ. Հո. — Երբեք, երբեք, դուք պարոն Յակոբ, վաղը եկէ՛ք որ ձեր տասը զրուշը վճարեմ եւ մէյ մըն ալ չճանչցած մարդերնուդ հագուստ մի՛ տաք:

(Յակոբ կ'երթայ)

Ը. ՏԵՍԱՐԱՆ

Տիկ. ՀոիֆՍ. ԱՏՐԻՆԷ. ՍԱԹ. ԱՐԱՔՍԻ ԵՒ ՇՈՒՇԱՆ

(Շուեան եւ Արաֆսի Տիկին Հոիֆի ծունգերուն եկած)

Տիկ. Հո. — Ըսէ՛ք նայիմ հիմա ինձի, ի՞նչ էր ձեր նպատակը: Շուշան. — Ներեցէ՛ք, այս անգամ, տիկին:

Արաֆսի. — Մօրաբոյր...:

Տիկ. Հո. — Ո՛չ, ո՛չ, պէտք է որ ըսէ՛ք:

Շուշ. — Ներեցէ՛ք, տիկին:

Տիկ. Հո. — Նախ պէտք է որ ըսէ՛ք:

Շուշ. — Ներեցէ՛ք, տիկին: Եթէ ապահով ըլլամ թէ պիտի ներէ՛ք ինձի, կ'ըսեմ, տիկին:

Տիկ. Հո. — Կը ներեմ. ըսէ՛ նայիմ:

Շուշ. — Հաւատա՛մ, տիկին: (Շուեան ոտքի կ'ելլէ եւ Արաֆսի ծունկի վրայ կը մնայ):

Տիկ. Հո. — Այո՛, հաւատայ, ըսէ՛, ի՞նչ էր դիտաւորութիւնդ:

Շուշան. — Դիտաւորութիւնս, ահաւասիկ տիկին: Իմանալով որ... ա՛հ, Աստուած իմ... կարծես կը խեղդուիմ կոր... ո՛հ, տիկին... լմնցաւ, լմնցաւ, չեմ կրնար խօսիլ:

Տիկ. Հո. — Ըսէ՛, նայիմ, սատանայ մը քեզի, ի՞նչ կ'ուզես որ բերանդ բացուի:

Շուշ. — Օրիորդ Արաքսիին ներողութիւնը:

Սաք. — Բարեսիրտ ըլլալնուդ ապացոյցը տուէ՛ք, մօրաբոյր:

Տիկ. Հո. — Ելի՛ր, չար մ'ըլլալէ աւելի անխելք մըն ես դուն:

Շուշ. — Հիմա կրնամ խօսիլ, դիտաւորութիւնս, տիկին, Օր. Ատրինէին ձեզ յանձնարարած սպասուհիին տեղն անցնիլ էր այս լաթերով եւ այն տեսակ վարմունք մը ունենալ կ'ուզէի որ մէյ

ալ սպասուհի առնելու զղջայիք. ի՞նչ ընեմ, տիկինս, ձեռքս չէ, կը նախանձիմ երբ ուրիշ մը ինձմէ աւելի խնամք տանի ձեր վերայ, որովհետեւ ես մինակս ամբողջն ալ կրնամ ընել: Ահաւասիկ յանցանքս, տիկին. . . բայց ներեցի՛ք ինծի այնպէս չէ՞:


Տիկ. Հո. — Ուրիշ անգամ ատանկ կատակ չընես:

Արաք. (Տիկին Հովսիսիմին) . — Ինծի ալ կը ներէ՞ք, մօրաքոյր:

Տիկ. Հո. — Անտարակոյս, չարածճի մը քեզի, գնա՛ մէյ մըն ալ հասակէդ վեր ասանկ գործեր մի տեսնէր:

(Ամենքն ալ խոնարհութիւն րնելով հանդիսականներուն՝ կ'երթան)

Վ Ե Ր Զ



ՆԱԻԹԻ ՀՈՐԵՐ

(Շարունակութիւն 39րդ էիւէն)

Երբ քարիւղի ցայտումը դադարի, այն ժամանակ ջրհանով վեր կը քաշեն, որով հանքատէրերը աւելի օգուտ կը քաղեն այս կերպով:

Կազի ցայտումը երբեմն ամիսներ կը տեւէ, ինչպէս պատահած է Տրուֆայի հորը բանալու ատեն, ուրիշ տղմուտ սիւն մը մինչեւ 90 մէթր բարձրացած է, և ցայտումը չորս ամիս տեւած է: Այդ չորս ամիսներուն մէջ հորը՝ օրական մէկ միլիոն լիթր քարիւղ ու աւազ դուրս ժայթքելով՝ կատարեալ ողողումներու տակ թաղած է շրջանակները:

Հոր մը բանալու ծախքերը, չահագործելու գործիքներն ալ մէջն ըլլալով՝ 20—25,000 ֆրանքի ու երբեմն ալ աւելի կը նըստին: Ծակուելիք երկրին բնութիւնն այդ ծախքերուն վրայ մեծապէս կ'ազդէ:

Այսօր 700 մէթրի չափ խոր եւ երբեմն ալ աւելի վար կ'իջնեն առատահոս նաւթ գտնելու համար, ուր երբեմն աւելի կամ նուազ խոշոր խողովներու մէջ հաւաքուած կ'ըլլայ, դիւրավառ կազերու ճնշման տակ ու աղջուրի դրացնութեան մէջ, նաւթատէր մը բախտաւոր է եթէ այս տեսակ խողովի մը վրայ իյնայ, նաւթն առանց երկար բարակ գործողութիւններուն՝ երկրին երեսը բարձրանալով՝ կը լեցնէ նաւթընկալ աւազանները:

Կազմը յանկարծ չբռնկելու համար, ինչ որ յառաջագոյն շատ կը պատահէր, հիմա կը գործածեն Տէվի անգլիացւոյն հնարած լապտերն, որուն լոյսը փակուած է վանդակաձեւ ու մետաղեայ կափարիչով գլանի մը մէջ, եթէ պատահի որ կազմ հորին չըջանկաները հաւաքուելով հասնի մինչեւ լապտերին ու մտնէ անոր մէջ, յառաջ կուգայ բորբոքում ու պայթում. բայց միայն լապտերին մէջ, որով ինքնին կը մարի ու միանգամայն կ'իմացնէ գործաւորներուն կազին մօտալուա վտանգը:

Հակառակ ամէն զգուշութիւններու, Պաքուի մէջ հրդեհներ շատ կը պատահի, եւ շատ մ'որդկանց ողջ ողջ հրկիզման պատճառ կ'ըլլայ: Սոյն օրինակ հրդեհ մը պատահեցաւ 1901 Յունվար 22ին, որու ականատես մը, հետեւեալ սրտածմլիկ նկարագրութիւնը ըրած է.

«Կապտան-Սե Ծովեան Ընկերութեան (Րօշիլտ) մագուլթի ամբարը յունվարի 22ի երեկոյեան ժամը 6¹/₂ին, յանկարծակի բռնկեցաւ, և նաւթի վտակները գուրս թափեցան դէպի ցած, դէպի ծով, ու լեցուցին լայնարձակ հրապարակը կրակով: Մէկ ակընթարթի մէջ ամէն բան բռնկած էր բոցերով, եւ ամէն ինչ, որ այրելու ընդունակ է, բնակարաններ, խանութներ, նաւթով լեցուած փողոցները, բոլորն ալ կ'այրէին սոսկալի գեհնէի մը նման:

«Բոցը այնքան արագ կը լափէր ամէն բան որ նոյն իսկ չէին լսուէր զոհերուն հեծեծանքները: Վտանգութիւնները ազատելու մասին շատ դժուար էր մտածել իսկ: Սարսափը տիրեց ամէնուն վրայ, որովհետեւ այրող ծովը՝ կ'սպառնար աւելի ևս տարածուիլ դէպի ցած, ու ծովը, դէպի գործարանները, որոնց շուրջը կը գտնուէին Րօշիլտի, Շիբաքվի և ուրիշներու նաւթի ամբարներն ու քարիւղի աւազանները:

«Աւազաններուն մէջ մեծ քանակութեամբ ջուր կը գտնուէր, որ այրած նաւթէն տաքնալով՝ կը հասնի եռացման աստիճանին, ուրկէ մեծ քանակութեամբ շոգի կը գոյանար, որ հետզհետէ տաքնալով վրայի գտնուած նաւթն կը պայթեցնէր ու աւազաններէն դուրս կը պոռթկար: Հրեղէն հեղեղը՝ ամբողջովին բորբոքելով՝ վայրկեան մը կը լուսաւորէ ամբողջ Պաքուն, և կատաղի յորջանքով կը լափէ ու կը կլնէ ամբողջ շրջակայ գտնութիւնները:

«Այրեցաւ բնակիչներով լեցուն տուններու ամբողջ թաղեր: Սոյն աղետալի հրդեհի զոհ գացած են 500էն աւելի անձինք, և այրած է 12 միլիոն բութ նաւթ: Մեծ զոհողութիւններով ու ջանքերով կարելի եղաւ հրդեհը մարել, որ տեւեց երկու օր:»

Քարիւղը՝ իր բնական վիճակին մէջ ունի թանձր-կանանչ գոյն

և զանի անկարելի է չուսաւորութեան համար գործածել, Ամենաթեթեւ աշխինքն 45 աստիճան (*) սեւ քարիւղն իսկ ունի իբր գիրար և դիւրաբար կազմ ուստի զանի կը թորեն, երբ ունենան 45-70 աստիճան տաքութիւն. յառաջ կուգայ քարիւղ երեւր,



որ շատ ցնդական է և կ'արձակէ լաւ լոյս, սակայն ո՛չ առողջապահական: 70-120ին յառաջ կուգայ քարիւղի ոգին, որ կը գործածենք մեր պատրուգային կանթեղներու համար, եւ վերջապէս

(*) Սեւ քարիւղի ամենաթեթեւն է 45 աստիճան եւ ամենածանր 80:

150-280ին յառաջ կուգայ նոյնիսկ Բարիւղը, (Կէրօսին): 400ին յառաջ կուգայ մեքենայի համար գործածելու ծանր իւղեր, ուսկից աճառ եւս կը շինեն, ինչպէս Սարուխանի մէջ: Կը մնայ քարիւղի մնացորդն, որ կը վառի շոգեշարժ մեքենաներու վառարաններուն մէջ, հանքածուխի նման: Քարիւղը ամենաբարձր ջերմութիւն կ'արտադրէ եւ այժմ կը գործածուի ընդարձակ դարբնոցներու մէջ:

Վերոյիշեալներէն զատ քարիւղէն կը հանեն նաճաքալին, վազիլին, որոնց գործածութիւնը շատ ընդհանրացած է բժշկութեան մէջ, կը հանեն նաեւ նկարչութեան մէջ գործածուած զանազան գոյներն, որոնց ճոխութեան ու փայլին չեն հաւասարիր բնաւ ուրիշ ներկեր:

Պաքուի մէջ, սոյն քարիւղէն զատ, երկրին հողը կ'արտադրէ տեսակ մը ճահճային կազ, որ բռնկցնելով՝ անոր ջերմութիւնը կը բանեցնէ այն տեղի գործարաններուն անհամար մեքենաներ:

Այս կազն, իր անվառ վիճակին մէջ, բնաւ չբռնկիր ինքնիքն կամ ատրաշէկ ածուխի միջոցաւ, մինչեւ անգամ եթէ սաստկապէս արծարծելու իսկ ըլլայ: Հնդիկները, որոնք իրենց կրակէն զատ ուրիշ չեն գիտեր, սովորաբար կը պահեն կտոր մը քուրջ, կ'այրեն ու կը բռնեն ճեղքի մը վրայ, որ բացուած է հողին մէջ, որով կազն անմիջապէս կը բռնկի:

Այս կազը չունի բնաւ ո՛ր եւ է հոտ եւ անոր ներշնչումէն մարդըս չի գանիր: Օղէն աւելի թեթեւ է, ամիսածնի նման չի խառնուիր ջուրի հետ, ալ իւղի նման կը բարձրանայ անոր վրայ: Սաստիկ ջերմութիւն կ'արտադրէ, և անոր բոցն ունի բաց դեղին գոյն եւ վառելու կամ մարելու ժամանակ մոխր չարտադրէր:

Այս կազը վառելու ժամանակ խառնուելով մթնոլորտային օդի հետ, կ'արձակէ սուր ձայն՝ նման հրացանի հարուածի՝ ձայնին: Կրակապաշտ հնդիկներն այցելուներուն ցոյց կուտան հետեւեալ դիտողութեան արժանի կէտը: Իրենց ատրուշանին մօտ կայ հոր մը, որու ջուրը կը գործածեն իրենք թէեւ այդ ջուրը մաքուր է, սակայն չըջկայաքը գտնուած ջրերու նման քարիւղ կը հոտի: Եթէ հորին բերանը գոցելու ըլլան, կէս ժամու մէջ անընդհատ դուրս ելլող կազը կը հաւաքուի ջրհորի մակերեսին վրայ: Յանկարծ բանալով զայն, վառած խոտ կը ձգեն մէջը, կազն անմիջապէս կը բոցավառի եւ յառաջ կուգայ սոսկալի պայթումն: Միւս ջրհորներուն մէջ այս փորձը չի յաջողիր, թերեւս աւելի քիչ քանակութեամբ կազ գտնուելուն համար:

Հին ժամանակները, քարիւղը կը դրուէր փայտէ տափառներու մէջ, բայց որովհետեւ քարիւղը ցնդական յատկութիւններ ունի, այդ պատճառաւ այժմ թիթեղէ ամաններու մէջ կը դրուի

ու բերանն ամրապինդ կը գոցուի Պաքուէն քարիւղը կը փոխադրեն ուրիշ քաղաքներ՝ նաւերու միջոցաւ, որոնց իւրաքանչիւրին տակ քարիւղի համար մասնաւոր շտեմարաններ կան, եւ Կասպից Ծովուն վրայ բարեխառնութիւնն այնքան սաստիկ չըլլալով՝ փոխադրութիւնը կանոնաւոր եւ անվտանգ եղանակով կը կատարուի։ Այս նաւերն ունին 8½ մէթր լայնութիւն եւ 75 երկայնութիւն։ Խողովակներով քարիւղը կը լեցնեն անոնց մէջ։ Առաջները մեքենան ու կաթսաները մէջտեղը կը շինէին, բայց հիմա՝ զանոնք կը տեղաւորեն ղեկին կողմը։ Մեքենաներուն երկու կողմը հաստատուած են երկու շտեմարաններ։ Եւ որովհետեւ Պաքուի մէջ ջուր չկայ, ինչպէս ըսինք, նոյն շոգենաւներն իրենց վերադարձին ջուր կը փոխադրեն Պաքու։ Այս նաւերը իրենց վառարանը կը տաքցնեն քարիւղով։ Կովկասեան երկրին մէջ շոգեկառքեր ևս կը գործածուին, կառախումբը կը բաղկանայ 25 վախօններէ։ Որոնց իւրաքանչիւրը կը բովանդակէ 10 տակաւ քարիւղ։ Իւրաքանչիւր վախօն երեք վայրկեանէն կը լեցուի, այնպէս որ երեք ժամուան մէջ կարելի կ'ըլլայ երեք կառախումբ քարիւղ ղրկել հեռաւոր քաղաքներ ցամաքային ճամբով։

Մնացեալը յաջորդով

ԼԱՆՃԱՐԵՂ ԶԻՍԸ

(Քանկրիկերնրիսք ենք Քրիսչըն)

Սոյն շաբաթերթին 22րդ թիւին մէջ հետեւեալ հետաքրքրական պատմութիւնը կար զոր հանդիսատես մը մանրամասնօրէն կը նկարագրէր։

Ձիին անունը՝ բուն իսկ իր (ձիուն) հեգումովը Ճիմքի (Jimkey) էր։ Շարաթ օր մը ես ալ այցելեցի ցուցահանդէսին այս հանճարեղ ձիուն, որուն քով խումբ տղայք խռնուած էին։ Կը փափաքիմ նկարագրել տեսածներս հազարաւոր մարդոց համար որոնք բաղդը ունեցած չէին այդ հանդէսին ներկայ ըլլալու։

Ձին՝ շառատ (sornu) գոյնով Լրարա-Համպչէթօնական տասնըմէկ տարեկան զամբիկ (զբսրագ) մըն էր, ու հարաւային Նահանգներուն (Միացեալ Նահանգաց) մէջ մեծցած էր, ուր իր նախորդ տէրը եւ ներկայ հանդիսին տեսուչը, Տոքթ. Ուիլքեմ Կի՝ իմացական կարողութիւններ նշմարելով ձիուն վրայ՝ տարիներ վատնած էր զայն կրթելու։

Երբ Տոթթորին ըսի թէ եկած եմ ցուցահանդէսը դիտելու որ երթամ ու տղոց պատմեմ, բարեսրտօրէն վանդակորմին ներսը, տախտակամածին դէմ աջ կողմը նստարան մը տուաւ ինծի: Անձկանօք կը նայէի թէ արդեօք որ եւ է նշան մը կա՞ր որով ձին իր ընելիքները կը գիտնար:

Տեսուչին մէկ հակիրճ յառաջաբանէն վերջ ձին գնաց եւ ակա-յովը զանգակ մը վերցնելով տախտակամածին վրայ կ'երթեւեկէր եւ ուժգնօրէն կը զարնէր: Հանդիսասրահին մէկ կողմը պատին երեսը դարակներ կային որոնց մէջ այբ, բէն, գիմի փորագրուած կաղապարները շարուած էին. եւ երբ առաջին անգամ տոթթորը ըսաւ « Անունդ ի՞նչ է », իսկոյն դարակին քով երթալով մէկիկ մէկիկ եւ կարգաւ բերաւ իր անունը կազմող գրերը եւ տուաւ Սթանլի անունով օգնականին եւ աս վերջինն ալ ուրիշ դարակի մը վրայ շարեց. և երբ վերջի գիրը բերաւ, առանց օգնականին տալու, ինք շրթունքովը տարաւ եւ ճիշդ տեղը դրաւ. որ ատեն հանդիսականները՝ դարակեզրին վրայ կը կարդային Jimkey, Մէկը հրամայեց « Տղայ հեգէ »: Անմիջապէս գնաց եւ գրերը բերելով շարեց: Ուրիշ մը՝ « Աղջիկ հեգէ »: Կրկին գնաց և գրերը բերելով շարեց: « Աղջիկ բառը յոջնակի չինէ » ըսուեցաւ: Անայլալ գնաց եւ S գիրը բերելով girle բառին վերջին ծայրը դրաւ: Խնդրուեցաւ հանդիսականներէն որ փոքր վեց տղաք ընտրեն իրենց մէջէն, ձիուն հետ հեգելու մրցման մտնելու. եւ ով որ յաղթէ պիտի առնու մէկ թալէրնոց արժեթուղթը զոր ձին գզրոցի մը մէջէն առաւ եւ սեղանի մը վրայ դրաւ:

Դժուար բառեր առաջարկուեցաւ հեգելու վրայ տղայք չիկըր-ցան, մինչ ձին առանց վարանելու գիրերը կը շարէր: Առաջարկուած բառերէն մէկն էր Esaioh (Եսայի) եւ ուրիշ մը Ewe (մաքի): Տղաքը վերջի բառը հեգեցին yeue, yue, yewe եւայլն, մինչ ձին չիփ շիտակ գրերը շարեց եւ մրցանակը առնելով տարաւ և իր սնտուկին մէջ դրաւ:

Կէսօրուան ճաշէս վերջ ինչպէս նաև յաջորդ շաբթու կրկին այցելեցի որ ատեններ հանդիսականք դարձեալ բառեր տուին հեգելու զորս ամենայն ճշդութեամբ հեգեց, բացի մէկ բառէն, զոր ձին իր հասկցածին համեմատ burt հեգեց, բայց երբ մարդը ըսաւ թէ birch ըսել կ'ուզէ, եւ Տոթթորը անդէն վերակրկնեց birch, այսինքն ծառ մը (ցարասի), ձին իսկոյն հասկցաւ և սը-խալը շտկեց:

Ձին՝ ամենայն ճշդութեամբ շարեց թիւերը երբ հարցուցին տարին, նահանջ տարին, ամիսը, շաբաթը քանի՞ օրեր ունին եւ շաբթուան քանի՞ օրերը գործի օրեր են, քանի՞ օրերը դպրոց

կ'երթան եւ քանի՜ անգամ եկեղեցի, Ամսուան եւ տարուան մէջ քանի՞ շաբաթներ կան, մէկ ամիսը քանի՞ օր ունի եւ Փետրուար քանի՞ օր:

Յետոյ կարգը եկաւ թուարանութեան դասին որուն հարցումները հանդիսականք ըրին: Փոքր աղջիկ մը հարցուց, « Չորս անգամ հինգ », եւ ծիմքի դարակին մէջէն 20 թիւը չրթունքին մէջ առած բերաւ: « Հինգ անգամ հինգ, հինգ անգամ ինը, երկու անգամ տասներկուք » հարցուեցաւ, որոնց պատասխաններն անմիջապէս բերաւ: Քովս նստող փոքր տղայ մը ըսաւ « Տասներկուք նուազ չորս »: Ծիմքի գնաց 8 թուանշանը բերաւ: Մէկը հարցուց « Երկու անգամ տասը »: Ծիմքի նայեցաւ դարակը եւ տեսաւ որ 20 թիւը չկար, քիչ մը վարանելէ վերջ շուրջը դիտեց եւ սոյն թիւը օգնական Սթանլիի ձեռքը նշմարելով գնաց եւ առաւ:

Դարձեալ մարդուն մէկը պոռաց « Երկու անգամ տասը նուազ քսան »: Հետաքրքրութեամբ նայեցայ թէ Ծիմքի պիտի կրնա՞յ լուծել: Ի՞նչ մեծ եղաւ զարմանքս երբ 0 մը առաւ ու բերաւ:

Է՛ն վերջի հանդէսին մէջ՝ ա՛լ աւելի դժուար խնդիրներ առաջարկուեցան որոնց ամենայն ճշդութեամբ կը պատասխանէր: Ինչպէս քսանըմէկ բաժանեալ եօթը, — բերաւ 3: Երկու անգամ 15 նուազ 16, — բերաւ 14: — Չորս անգամ չորս, — Ծիմքի դարակին վրայ 16 թիւը չգտնելով ի գուր փնտռեց տղոց ձեռքերուն մէջ եւ երբ ասդին անդին կը նայէր տախտակամածին վրայ գտնելով վեր առաւ եւ տարաւ: « Երեսուն նուազ տասներկու » երբ հարցուեցաւ, 18 թիւը առաւ եւ տուաւ Սթանլիի: Վայրկեան մը վերջ մէկը պոռաց 3 անգամ 6, եւ Ծիմքի առանց դարակին նայելու յիշեց թէ քիչ մ'առաջ Սթանլիի տուած էր եւ ուստի զայն առնելու համար շիտակ անոր քով գնաց: Միայն մէկ անգամ սխալ մը ըրաւ. երբ հարցուեցաւ 5 անգամ 4՝ որուն Ծիմքի բերաւ 24 թիւը. բայց սխալը տեսնելով՝ 20 թիւը բերելու գացած ատեն չորս ոտքին վրայ ծիծաղաշարժ ուստում մը ըրաւ, իբր ըսել ուզելու համար թէ՝ « Ներեցէ՛ք, սխալեցայ »:

Հիացումները ծայրաստիճան եղան, երբ մէկը հարցուց « չորսէն եօթը հանէ », եւ Ծիմքի անխռով մտիկ ըրաւ եւ յետոյ գլուխը շարժելով վեհօրէն անշուշտ ըսել ուզեց թէ « ո՛չ տէր, զիս չես կրնար իտբել »: Նմանապէս բացասական շարժում մ'ըրաւ անյապաղ երբ ըսին « քսանեօթ բաժանեալ չորս »: Որչափ որ կը յիշեմ ամէն հարցման կ'ունկնդրէր եւ մեր տասն եւ մէկ տարեկան տղոց պէս կը տրամաբանէր եւ կը պատասխանէր:

Աս բոլոր հաշիւներէն սա եզրակացուցի թէ 30էն անդին Ծիմ-

քի չէր կրնար հաշուել, եւ իրօք Տոքթորն ըսաւ թէ ատկէ անդին դեռ վարժութիւն ըրած չէ:

Առաջարկուեցաւ որ հանդիսասրահին մէկ անկիւնը դրուած դարակախորշերէն նամակ մ'առնելով իր հասցէին պիտակը վրան փակցնէ եւ տանի դիմացի գզրոցներէն միոյն մէջ դնէ, եւ այնպէս ըրաւ քովս նստող փոքր տղայ մը պոռաց «Ճիմքիի համար նամակ մը», եւ Ճիմքի իրեն յատուկ արկղէն նամակ մ'առաւ ու որոշեալ գզրոցը տարաւ եւ կղպանքով ալ գոցեց:


Ճիմքի՝ սեղանաւոր տղու մը շափ ալ ճարտար էր, քանզի նիքել կամ $\frac{1}{10}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{2}$ արծաթ թալէռ մը եւ կամ արծէթուղթ մը շատ դիւրաւ կրնար զանազանել եւ ուզուածին պէս բերել: Ինծի ընկերակից տղայ մը ձիուն ցուցուցած սրամտութիւններուն վրայ հիանալով եւ մոռնալով հանդիսականները, աղաղակեց «Ճիմքի արծաթ թալէռ մը բեր»: Ձին գնաց եւ գզրոցին մէջէն առաւ ու Տոքթորը հրամայեց, «հանդիսականներուն ցուցուր», Ճիմքի գլուխը վերցնելով ու շրթունքները բանալով ասդին անդին պտըտեցաւ եւ թալէռը ուզող տղուն գնաց որ տայ բայց նա փախաւ:

Փոքր դարակի մը մէջ զանազան գոյներով խաւաքարտի մանր քառակուսի եւ քառակողմ թղթեր լեցուած էին: Ինչ գոյնով որ կարմիր, կանանչ, կապոյտ եւ այլն, առաջարկէին, իսկոյն կ'երթար եւ նոյն գոյնէն հատ մը կ'առնէր ու կը բերէր:

Հրապարակ բերին մեծկահ ապակեայ շիշ մը որուն մէջ ձիուն գլուխը կրնար մտնել: Մինչեւ բերանը ջրով լեցնելէ վերջ մէջը արծաթ թալէռ մ'ալ ձգուեցաւ: Տոքթորը ըսաւ «Ճիմքի շիշին մէջէն թալէռը հանէ՛ եւ գզրոցին մէջ դնելով անտեղէն զենջակ մը բե՛ր»: Ճիմքի գլուխը ջուրին մէջ խոթեց, առանց կաթիլ մը խոնելու, եւ յատակէն թալէռը առած հանդիսականներուն ցուցուց եւ տարաւ գզրոցին մէջ ձգեց, ուսկից զենջակ մ'առնելով եկաւ ու Տոքթորին առջեւ կեցաւ: Սա ալ աղուոր մը գլուխը ցամքցուց եւ խնձորի կտոր մ'ալ բերանը դնելով հրամայեց որ զենջակը տանի եւ տեղը դնէ. ու այնպէս ըրաւ:

Իցի՛ւ թէ ընթերցող հայ հասարակութիւնը կարդալով սա գերազանցօրէն հետաքրքրական պատմութիւնը, գիտակցութեանը գար թէ, եթէ անբան արարածի մը մէկը այսքան հիանալի կալողութիւններ ունենայ, հապա քանիներ կան պճըլիկներու, մէջ որոնցմէ շատեր անասունի մը պէս կ'ապրին ու կը մեռնին:

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔ



Եթէ ձայն յառաջ բերող մարմինի մը քով պարապ խոռոչ մը ըլլայ, այն ժամանակ ձայնը զօրաւոր եւ ուժգին կ'ըլլայ. շատ պարզ է այս: Եթէ ականջնուս մօտեցնենք մէջը պարապ հողէ աման մը, օդին հազարումէկ աղմուկներն, որոնք քիչ մը առաջ հազիւ լսելի կ'ըլլային, այն ժամանակ ուժգնապէս կը զարնուին մեր ականջներուն, եւ այն տղաքները՝ որ այս փորձը կ'ընեն, կ'ուզեն հաստատել թէ՛ իրենք կը լսեն ծովին մրմունջը ծովային խեցիի միջով: Նոյն երեւոյթն եւս տեղի կ'ունենայ՝ երբ ժայռերու մէջէն հոսող աղբիւր մը գտնուի քարայրի մը քով, ու այն ժամանակ աղբերակին քաղցրահնչիւն կարկաշտ կ'ըլլայ գետի մը թաւալումի ահեղ ձայնը:

Հնչականութեան այս երեւոյթը կրնայ յառաջ բերուիլ հետաքրքրական եւ դիւրին եղանակով:

Սեղանի մը վրայ դրէ՛ք սովորական պարապ գաւաթ մը. հընչեցուցէք այդ գաւաթը մատովնիդ անոր զարնելով՝ եւ միւսնոյն ատեն անոր մօտեցնելով ուրիշ գաւաթի մը եզերքը. պիտի տեսնէք այն ատեն տարօրինակ երեւոյթ մը. ձեր մատին մէկ փոքր շօշափումը յառաջ պիտի բերէ ձայնի զօրաւոր ուժգնութիւն մը, որ արդիւնք է պարապ գաւաթին մօտեցնելուն:

Ահաւասիկ ուրիշ զուարճալի փորձ մըն ալ:

Առէ՛ք որ եւ է երկաթի հաստ կտոր մը, մէկ ծայրէն կապեցէք մէկ մէթը երկայն ու զօրաւոր դերձանի մը մէջտեղէն, այնպէս որ դերձանը կէս մէթը երկայնութեամբ երկու ծայրեր ունենայ. սոյն դերձանի ծայրերն ալ փաթտեցէք աջ ու ձախ ձեռքերնուդ ցուցամատներուն վրայ եւ մատերնուդ ծայրերը դրէք երկու ականջներնուդ մէջը, այնպէս որ երբ կախուն ու գլուխնիդ մի քիչ առաջ ծռած կենաք, երկաթը դերձանին մէջտեղէն օգին մէջ

կախուած մնայ, Ձեր փոքր եղբայրն կամ քոյրը փոքր երկաթի կտորով մը թող զարնէ առկախ երկաթին, յայնժամ պիտի զգաք զանգակի զօրաւոր ձայներ, երբ հարուածը շարունակուի:

Մատերնիդ հանեցէք ականջներնուդ մէջէն ու հարուածը կըրկանեցէք, պիտի տեսնէք թէ միայն հարուածին պարզ ձայնը կ'ելլէ երկու երկաթէն:



Գաւաթը կը սուլի. — Կ'առնէք ջուրի կամ օշարակի պատտուանդանաւոր գաւաթ մը, որչափ կարելի է լաւ տեսակէն, որ է քրիսթալ կոչուածն, որուն մէջ կը լեցնենք մէկ կամ երկու մատնաչափ բարձրութեամբ ջուր. կը դնենք զայն հարթ սեղանի մը վրայ ու ձախ ձեռքով պատտուանդանին շուրջը կը բռնենք որ չի շարժի: Յետոյ աջ ձեռքի ցուցամատնիս՝ գաւաթին մէջ պարունակող ջուրին թաթխելով՝ կ'սկսինք գաւաթին շուրթը պտտցնել (վերեւ դրուած պատկերին համաձայն) մեղմիկ մը չփելով:

Նախ եւ առաջ պիտի սկսի քրքրուի՞ր՞ ձայն մը յառաջ գալ, ինչ որ բնական է ամէն ապակեայ մարմիններուն վրայ չփմանց ժամանակ: Ուստի մէկ քանի շրջան ընելէ վերջ՝ դարձեալ մատերնիս կը թաթխենք ջուրին մէջ ու անընդհատ կը շարունակենք. ահա այսպէս մի քանի անգամ սոյն գործողութիւնը կատարելով՝ առաւաւելն մէկ երկու վայրկեանէն կ'սկսի գաւաթը սուլել՝ այնչափ քաղցր, որ մարդ իր շրթունքով չէ կարող այնքան լաւ սուլել:

Ձեռքին ու գաւաթին մաքրութիւնը խիստ անհրաժեշտ է. եթէ տարբեր մեծութեամբ գաւաթներու վրայ ընէք սոյն գործողութիւնը՝ տարբեր ձայնով ու ներդաշնակութեամբ կը սուլեն:

ՄԱՄԱՆՅՈՅ ՏԱԿ**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ**

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամէնէն Ժողովրդական, Ամէնէն Զուարճալի
Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ՆԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅԸ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻՄարաշ, Արժ. Տ. Ն. Շ. — Ստացանք: Շնորհակալութիւն ձեր բարեմաղ-
թութեանց համար:Ատաբազար, Ա. էֆ. Պ. — Ստացանք: Շնորհակալութիւն ձեր բարեմաղ-
թութեանց համար: Երկու բաժանորդաց թերթերը նոր հասցէին ղրկուեցան:Հիւսէյնիկ, Կ. էֆ. Յ. — Ստացանք շնորհակալութիւն: — Յանձնախարու-
թիւննիդ կը կատարուի՝ եթէ փոխարժէքն ու թղթատարի ծախսը ղրկուի:Մարգուան, Ա. էֆ. Կ. — Ստացանք: Միայն երեք օրինակ պիտի ղրկուի,
որոնք վճարած են բաժնեգինը կ'ըսէք:

Վան, Մ. էֆ. Տ. — Ստացանք:

Տիարպէքիւր, Մ. էֆ. Պ. — Ձեր խնդրածը մեր քով չկայ: Կրնաք հեղինա-
կին, Մելքոն էֆ. Գալէնտէրեանի դիմել Պոլիս, Պէոյիւք Եէնի խան, եւ լիով
տեղեկութիւն ստանալ:ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ
ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն
կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑՀանրագիտակի Մեծ. Բաժանորդներէ և Գործակալներէ կը
խնդրենք որ բաժանորդագիրներէ և յանձնարարութիւններէ մը-
նացած պարտքերնին վճարել բարեհաճին այլևս, որովհետեւ
տարւոյն ինն ամիսը լրանալէն վերջը՝ դեռ չառ տեղեր սոյնօրի-
նակ հաշիւներ անվճար կը մնան:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38

1894-1895

1894-1895

The following table shows the results of the
elections for the various offices of the
County of ... in the year 1894-1895.
The names of the candidates are given in
the first column, and the number of votes
received by each is given in the second
column. The names of the winners are
given in the third column.

1894-1895

The following table shows the results of the
elections for the various offices of the
County of ... in the year 1894-1895.
The names of the candidates are given in
the first column, and the number of votes
received by each is given in the second
column. The names of the winners are
given in the third column.

The following table shows the results of the
elections for the various offices of the
County of ... in the year 1894-1895.
The names of the candidates are given in
the first column, and the number of votes
received by each is given in the second
column. The names of the winners are
given in the third column.

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

Նոր տարիէն սխեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու Յոսամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Դ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Լանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պազ Վազեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա'ա, Կարապետ էֆ. Գօճանեան
Թեֆրեսալ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրիւն, Դրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Դրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Միացեալ-Նանանգներ, Մ. Մ. Քարակափուրեան և Ընկ.
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Աղարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէյլէրեան
Սիւմհաճի քոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր քոքրիւ » » »
Տիւրպէիք, Լեոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգինը և կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակագրոջմ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քանիս ընել): Նամակագրոջմ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը հասած ժամանակ, երբէք պատասխանատու չգոյք: